Ասում են, թե ...

Այնպես անփու՛յթ, այնպես հանգի՛ստ
Անցնում ես իմ տան մոտով,
Մինչ ես ուրիշ տներում իսկ
Քեզ եմ փնտրում կարոտով։

Ասում են, թե մոռացել ես,
Չեմ հավատում, իմ անգին,
Պարզապես դու հեռացել ես,
Մոտս թողել քո հոգին։

Եվ այնպես հեշտ, այնպես խնդուն
Մատնում ես ինձ աշխարհին,
Մինչ դողում է, որպես երդում,
Անունդ՝ իմ շուրթերին։

Ասում են, թե ինձ դավել ես,
Չեմ հավատում, իմ անգին,
Պարզապես դու խռովել ես
Ու տանջում ես իմ հոգին։

Անցնում ես դու ու չես նայում,
Մինչ ես կանգնած մոլորուն,
Քեզ աչքերիս մեջ եմ թողնում
Ու տանում եմ հետս տուն։

Ասում են, թե սերը սուտ է,
Չեմ հավատում, իմ անգին,
Առանց սիրո տունս ցուրտ է,
Արի, շունչ տուր կրակին։

խոսք՝ Սիլվա Կապուտիկյանի, երաժշտ.՝ Վլ. Բալյանի